ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Միջազգային որոշ ՀԿ-ների կողմից հնչեցված այն կարծիքը, որ ապրիլի 2-ի ընտրություններին ՀՀ-ն չի դիտարկում միջազգային դիտորդների ներկայությունը՝ որպես կարևոր ներդրում ընտրական գործընթացների կատարելագործման հարցում՝ դրանով իսկ խախտելով իր միջազգային, մասնավորապես ԵԱՀԿ հանձնառությունները, հիմնազուրկ է: Դիտորդներին հրավիրելիս և հավատարմագրելիս ԿԸՀ-ն առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ և այդ հարցում առկա միջազգային հանձնառություններով: Ի կատարումն այդ հանձնառությունների՝ հայկական կողմը հրավիրել է միջազգային միջկառավարական բոլոր համապատասխան կառույցներին՝ մասնավորապես ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԵԽԽՎ, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողով, ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողով և այլն: Ընտրությունների օրը նշված կազմակերպությունների անունից դիտորդական առաքելություն կիրականացնեն ավելի քան 650 օտարերկրյա քաղաքացիներ՝ տասնյակ պետություններից:

Որևէ սահմանափակում չի դրվել ոչ դիտորդների քանակի ոչ էլ կոնկրետ ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ-ի կողմից առաջարկված որևէ դիտորդի մասնակցության վրա: Եթե նման մտադրություն լիներ, ապա չէին հավատարմագրվի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ից առաջադրված 28 երկարաժամկետ և ավելի քան 300 կարճաժամկետ դիտորդներ, այն դեպքում, երբ նախապես կազմակերպությունը խնդրել էր միայն 24 երկարաժամկետ և 250 կարճաժամկետ դիտորդի հավատարամագրում: Նույն ճկունությունը ցուցաբերվել է այլ միջկառավարական դիտորդական առաքելությունների հանդեպ:

Հարկ է նկատել, որ միջկառավարական սկզբունքով ձևավորված առաքելությունների դիտորդների քանակը ՀՀ-ի չափ տարածք և բնակչություն ունեցող երկրի համար ապահովում է միջազգային բավականին մեծ ներգրավվածություն: Ավելին, 2009 տեղամասերից ավելի քան 1500 տեղամասերում, որը ընդգրկում է ընտրողների 93 տոկոսը, իրականացվելու է առցանց ուղիղ հեռարձակում, որը նաև տեսագրվելու է և հասանալի է լինելու համացանցում: Վստահաբար, այս միջողառումները բավարար են ապահովելու ընտրական ողջ գործընթացի լիարժեք թափանցիկությունը:

Որևէ սահմանափակում չի դրվել հայաստանյան ՀԿ-ների դիտորդների մասնակցության առումով ևս: Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն կիրականացնեն 49 տեղական հասարակական կազմակերպությունների ավելի քան 28.000 դիտորդներ, որոնց կազմում ի դեպ ընդգրկված են նաև բազմաթիվ օտարերկյա քաղաքացիներ: Ի դեպ, այն

տեղական ՀԿ-ները, որոնք անհանգստություն են հայտնում իրենց միջազգային գործընկերներին՝ որպես ՀԿ չհավատարմագրելու վերաբերյալ, կարող էին ուղղակիորեն առանձին օտարերկրյա դիտորդներին հավատարմագրել իրենց ՀԿ-ի դիտորդական առաքելության կազմում:

Չենք հրավիրել միայն օտարերկրյա ՀԿ-ներին հետևյալ հիմնավորմամբ: Չկան օտարերկրյա այս կամ այն ՀԿ-ների ընտրության միասնական չափորոշիչներ, և դժվար է խուսափել խտրական և կամայական մոտեցման կիրառման մեղադրանքներից: Ինչպիսի ընտրություն էլ կատարվի, այն կարող է ընկալվել, որպես սելեկտիվ և քաղաքական դրդապատճառներով պայմանավորված, իսկ հրավիրել բոլոր նրանց, ով ներկայացնում է նմանօրինակ դիմում, նշանակում է անհարկի ծանրաբեռնել տեղամասերի աշխատանքը և վտանգել ընտրական գործընթացների անխափանությունը:

Կարծում ենք՝ ընտրված մոդելը՝ միջազգային դիտորդներ միջկառավարական կազմակերպություններից և ՀԿ-ների մասնակցություն հայաստանյան կազմակերպություններից, լավագույն տարբերակն է ընտրական գործընթացների թափանցիկ և մասնագիտական դիտարկում ապահովելու համար:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով